ԿԱՐԾԻՔ

Ռեգինա Ալեքսանի Գալուստյանի «համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի հայցմանը ներկայացված «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԵՐԸ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՄԻՏԵԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ» ատենախոսության վերաբերյալ

Օսմանյան կայսրության քաղաքական համակարգի կարևոր առանձնահատկություններից էր ազգային ու էթնիկական փոքրամասնությունների առկայությունը և նրանց նկատմամբ պետական քաղաքականության մշակումը, որի հիմքում դրված էր կրոնական պատկանելիության սկզբունքը: 19-րդ դարում Օսմանյան կայսրությունն ապրում էր համակարգային ճգնաժամի շրջան, ուստի անհրաժեշտ էր իրականացնել բարեփոխումներ ու արդիականացնել քաղաքական ու սոցիալական ինստիտուտները: Այս մոտեցումներն օսմանյան վերնախավի պահպանողական մեծամասնության համար ընկալելի չէին, ավելին՝ նրանք դեմ էին նման ցանկացած նախաձեռնությանը: Մյուս կողմից, Եվրոպայում ձևավորված սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական մտքի մի շարք գաղափարներ, հատկապես ազգայնականության ու ռասայականության վերաբերյալ, 19-րդ դարի կեսերից սկսեցին ներթափանցել Օսմանյան կայսրություն: Եվրոպական այս գաղափարներից առաջինն ազդվեցին նոր օսմանները:

Օսմանյան կայսրությունում առաջին քաղաքական ուժը «Միություն և առաջադիմություն» կոմիտեն էր, որը եվրոպական գաղափարներն ընդգրկեց իր գաղափարախոսությունում: Կոմիտեն շարունակեց կայսրության արդիականացման քաղաքականությունը, սակայն մեկ կարևոր տարբերությամբ՝ ընդգծեց թուրքական ազգի կարևորությունը և թուրքական ազգային պետություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այս քաղաքականության համար երիտթուրքերը վերցրեցին

եվրոպական ծայրահեղական գաղափարները, մասնավորապես մեծ տեղ հատկացնելով ռասիզմին և սոցիալ-դարվինիզմին:

Երիտթուրքերի իշխանության գալուց հետո Օսմանյան կայսրության մասնատման գործընթացը շարունակվում էր, ուստի կայսրության անվտանգության և տարածքային ամբողջականության պահպանման խնդիրները դարձան գերակայող: Ռասիզմի և սոցիալ-դարվինիզմի գաղափարների ազդեցության ներքո տեղաբնիկ որոշ քրիստոնյա և մուսալման փոքրամասնություններ սկսեցին ընկալվել որպես պետության անվտանգության և առաջընթացի խոչընդոտ, որն էլ դարձավ նրանց ոչնչացնելու որոշումը կայացնելու հիմքերից մեկը: Երիտթուրքերի այս քաղաքականության գագաթնակետը դարձավ հայոց ցեղասպանությունը, որի ժամանակ կառավարող վերնախավի կողմից օգտագործված մեխանիզմները՝ մտավորականության ու տղամարդկանց ոչնչացումը, կանանց ու երեխաների ձուլումը, հայերի ունեզրկումը ու հայրենազրումը և այլն, գործիք դարձան ազգային պետության ստեղծման համար: Հարկ է նշել, որ երիտթուրքերի այս մեխանիզմներն օգտագործվեցին նաև քեմալականների կողմից քեմալական ազգային պետության հիմնադրման գործընթացում:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության և դրա կերպափոխությունների, ինչպես նաև եվրոպական սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական մտքի ազդեցությունները համակողմանի ուսումնասիրության չեն ենթարկվել, այդ թվում թուրք հեղինակների կողմից: Բացի այդ, կարևոր է ուսումնասիրել եվրոպական մտքի ազդեցությունը երիտթուրքերի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ որդեգրած քաղաքականության, մասնավորապես նրանց բնաջնջման որոշում կայացնելու գաղափարական հիմքերը հասկանալու համար: Սա կարևոր է նրանց կատարած հանցագործության կանխամտածվածության գաղափարը հիմնավորելու և թուրքական ժխտողականության դեմ հակափաստարկներ ներկայացնելու տեսանկյունից: Վերոշարադրյալը պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ըստ էության ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում հնարավորինս համակողմանի ներկայացնել եվրոպական սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական մտքի ազդեցությունը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման և հետագա կերպափոխությունների վրա: Հեղինակը, օգտագործելով անհրաժեշտ գրականություն, փորձել է բացահայտել ու վեր հանել եվրոպական մտքի ազդեցությամբ երիտթուրքերի հայոց ցեղասպանության կազմակերպման որոշումը կայացնելու գաղափարական հիմքերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ատենախոսությունը գրվել է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հարուստ գրականության հենքի վրա, ինչպես նաև օգտագործվել են տպագիր և անտիպ սկզբնաղբյուրներ, մամուլ, ականատեսների և ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունները, որոնց մի մասը վերլուծության է ենթարկվել նոր լույսի ներքո:

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1889-1918 թթ. ընկած ժամանակահատվածը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադրումից մինչև իշխանության իրավական դադարեցումը:

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում դրված են պատմական, համեմատական, ռետրոսպեկտիվ և համակարգային մեթոդները, որոնց կիրառումը առանձին հարցերի ուսումնասիրության համար նպաստել է տրամաբանորեն միմյանց կապված աշխատանքի շարադրմանը:

Ատենախոսությունն ունի գիտական և կիրառական նշանակություն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնադրման, գաղափարական կերպափոխությունների, եվրոպական մտքի ազդեցության, ազգային ու էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ ձևավորված քաղաքականության և հայոց ցեղասպանության վրա այդ գաղափարական ազդեցությունների ուսումնասիրման ու

բացահայտման տեսանկյունից: Աշխատանքում առաջ քաշված դրույթները և եզրահանգումները կարող են օգտակար լինել պատմաբանների, մարդաբանների, սոցիոլոգների, ցեղասպանագետների և քաղաքագետների համար՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներքին քաղաքականության տարբեր խնդիրների, այդ թվում հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու համար: Ատենախոսությունը կարող է իր ներդրումն ունենալ Հայաստանում օսմանագիտության և ցեղասպանագիտության զարգացման գործում:

Ատենախոսը միանգամայն հիմնարար ներկայացնում է վերնախավի գաղափարախոսության կարևորությունը ցեղասպանությունների իրականացման համատեքստում, նա միաժամանակ բացահայտել է օտարման, ռասայականացման և թիրախավորման վաղ ահազանգող նշանները, որոնք կարող են ներդրում ունենալ ցեղասպանությունների կանխարգելման գործում: Հեղինակը խորացնում է հայոց ցեղասպանության կանխամտածվածության փաստարկը՝ ըստ այդըմ նպաստելով թուրքական ժխտողականության դեմ պայքարին:

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները և թեզերը փաստում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հեղինակի կարողությունը և հմտությունը, իսկ օտար լեզուների իմացությունը նպաստել է հետազոտվող հարցերի բազմակողմանի քննությանը:

Հեղինակը կատարել է արդյունավետ ու գովելի աշխատանք, սակայն ատենախոսությունը զերծ չէ թերություններից ու բացթողումներից՝

- ✓ Հեղինակն աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում ընդհանուր գծերով ներկայացնում է 19-րդ դարի եվրոպական սոցիալ-փիլիսոփայական և քաղաքական մտքի ընդհանուր պատկերը, այդ թվում հակիրճ անդրադառնում է ազգայնականությանը: Այս հատվածում հարկավոր էր անդրադարձ կատարել 19-րդ դարում Եվրոպայում տարածված ազգայնականության երկու հիմնական՝ ֆրանսիական և գերմանական, մեկնություններին և «Միություն և

առաջադիմություն» կոմիտեի վրա դրանց ազդեցություններին, ինչպես նաև գերմանական ազգայնականությանը նախապատվություն տալու հիմքերին:

- ✓ Աշխատանքում անհրաժեշտ էր ավելի մեծ տեղ հատկացնել թյուրքիզմին և թուրքական ազգայնականության գաղափարներին, քանի որ դրանք ազդված էին եվրոպական ազգայնականությունից: Այս համատեքստում հարկ էր առավել հանգամանորեն անդրադառնալ Զիյա Գյոքալփին, քանի որ վերջինս մի կողմից գտնվում էր եվրոպական գաղափարների ազդեցության ներքո (մասնավորապես ֆրանսիացի սոցիոլոգ Է. Դյուրկհեյմի), մյուս կողմից կանգնած է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարական ակունքներում, միաժամանակ հարկավոր էր ատենախոսությունում օգտագործել նրա աշխատությունները, մասնավորապես «Թյուրքականության հիմունքներ»-ը և «Թյուրքականացում, իսլամականացում, արդիականացում»-ը:
- ✓ Ատենախոսությունում հպանցիկ անդրադարձներ կան տվյալ ժամանակաշրջանի մամուլին, այնինչ հարկավոր էր ավելի համակողմանի ներկայացնել մամուլի դերը ինչպես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարների ձևավորման ու կերպափոխությունների, այնպես էլ եվրոպական մտքի տարածման գործում: Ազգայնականության, սոցիալ-դարվինիզմի, թյուրքականության, ռասայականության, թուրքական ազգայնականության վերաբերյալ գաղափարներ էին տարածում «Türk Derneği», «Türk Yurdu», «Türk Ocaklar», «Küçük Mecmua», «Yeni Mecmua», «Genç Kalemler» ամսագրերում և հանդեսներում հրատարակված հոդվածները:
- ✓ Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն առավել հանգամանորեն և թիրախային ցույց տար Օ. Կոնտի և մասնավորապես Հ. Սպենսերի մշակած տեսությունների, մասնավորապես «ուժեղի գոյատևման» և «գոյության պայքարի», ազդեցությունը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պետական քաղաքականության ձևավորման վրա: Թերևս հարկ էր քննարկել, թե եվրոպական սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական մտքի գաղափարները

որքանո՞վ էին ինստիտուցիոնալացվել օսմանյան քաղաքական էլիտայի շրջանում և ինչպե՞ս էին ազդում քաղաքական որոշումների կայացման վրա, այդ թվում ազգային ու էթնիկական փոքրամասնությունների հետ կապված:

Նշված դիտողությունները և նկառատումները ամենևին չեն ստվերում կատարված աշխատանքը:

Ռեգինա Ալեքսանի Գալուստյանի *«Եվրոպական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում և դրա ազդեցությունը հայոց ցեղասպանության վրա»* խորագրով ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի
Հայաստանին հարակից և մերձավոր արտերկրի պետությունների
ռազմավարական հետազոտությունների բաժնի գիտաշխատող
պ.գ.թ., դոցենտ Նելլի Մինասյան

11.11.2024 թ.

ԵՊՀ գիտական քարտուղար
Մ.Հ. Հովհաննիսյան